6851

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«22» 04 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0041-22

Ձեռնարկողը՝ ***«Դաշտի Քոմփանի » ՍՊԸ***
ք. Երևան Մանուշյան 45

Գործունեությունը՝ ***Եղվարդի խճ 2/18 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան Դավթաշեն վարչական շրջանի Եղվարդի խճ 2/18

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0041-22
<22> 04 2022թ.

«Դաշտի քոմփանի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի, Դավթաշեն Եղվարդի խճ 2/18 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Դաշտի քոմփանի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան

Ներածական մաս. «Դաշտի քոմփանի» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի, Եղվարդի խճ 2/18 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ը /նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3196.0 ք.մ, մայթ, ճանապարհ, ճեմուղի 1672.0 ք.մ/:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիր նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի դիմումն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 2528872, 0.799 հա /ծածկագիրը՝ 01-004-0317-0009/, Երևանի քաղաքապետարանի կողմից 24.12.2020թ. տրված N 01/18-07/1-Հ-11695-1139 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման 24-րդ կետի համաձայն՝ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվում է բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Դավթաշեն համայնքի Եղվարդի խճուղուն հարող հ.2/18 հասցեում, գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված

բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները և պատմության և մշակույթի հուշարձաններ:
Համաձայն տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքի առաջին շերտը՝ լիցքային գրունտ չպառկապնդված, կավավազա-մանրախճային կազմի, հազվադեպ քարաբեկորներով, ավազային նյութի խառնուրդով մինչև 20%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-4.0 մետր:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Բազմաբնակարան բնակելի համալիրը ներառում է թվով 3՝ մասնաշենքեր, հատկապես առանձնանում է դրանցից մեկն, որը աշտարակի դեր է կատարում և հանդիսանում է համալիրի դոմինանտն՝ իր բարձրությամբ: Թաղամասը գտնվում է կարևոր խաչմերուկի թեվերից մեկի վրա և իր վրա է վերցնում տարածությունը վերաձեվելու ֆունկցիան: Այն լրացնում է խաչմերուկի մյուս թեվերում վեր խոյացող շենքերի՝ որպես կարևոր դերակատարում ունեցող վերտիկալ էլեմենտներ: Համալիրը կազմող շենքերի առաջին հարկերում գտնվում են կոմերցիոն տարածքներն ու շքամուտքերն, որոնք պիտի ծառայեն բնակիչների կենցաղային և առօրյա խնդիրների կազմակերպմանն ու լուծմանը:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

Հողի ընդհանուր մակերես՝ 7990 քմ;
Կանաչապատման մակերես՝ 3121.67 ք.մ.;
Կառուցապատման մակերես՝ 3196 ք.մ.
Մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 1672 քմ;
Բնակարանների քանակ՝ 704 հատ;
Ավտոկայանատեղերի քանակ՝ 540 հատ:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Համաձայն էսքիզային նախագծի բազմաբնակարան բնակելի համալիրը նախագծվել է ստորգետնյա ավտոկայանատեղի: Ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր, ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի

ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն: Բազմաֆունկցիոնալ շենքի բնակելի մասի խոհանոցներից, ս/հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնքբարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲ

ընկերության ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Եղվարդի խճուղով անցնող d=1000մմ ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել Մարգարյան փողոցով անցնող d=500մմ կոյուղատարին:

Էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել կառուցվելիք ենթակայանի 0.4կՎ վահանից: Նոր ենթակայանի կառուցապատման համար հատկացվելու է 8մx12մ=96քմ մակերեսով տարածք:

Գազամատակարարումը Q=2230 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Երևան-1 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար-գազատարի 5.9 կմ-ից:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտնկվեն ծառեր և թփեր:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հետևյալ միջոցառումները՝

- շինարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14.00-18:00,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 350 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքն, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից 48 ամիս հետո, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝
- մինչ աշխատանքների սկիզբն ոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը,
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. . Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
3. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների
5. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Կառուցապատման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվում է 2.480000 հազ. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում են՝ նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը:

Պարճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Դավթաշեն վարչական շրջանից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններն, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
   - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   - բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:

7. Վերջնական նախագծում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները

8. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման համար նախատեսված հողամասերի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը համապատասխանեցնել նախագծի հետ:

9. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Առաջարկվող միջոցառումներն ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դաշտի քոմփանի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Եղվարդի խճ 2/18 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ն.Մովսիսյան